# ԴԱԲԱՂ

Սուր ընթացող և բացառիկ արագությամբ տարածվող վարակիչ հիվանդություն է: Առանձնապես զգայունակ են տավարը, խոզերը, ոչխարները և այծերը: Հիվանդանում են նաև ուղտերը, եղջերուները և շատ այլ վայրի երկսմբակ կենդանիներ:

Զգայունակ է նաև մարդը: Հիվանդի բերանի խոռոչի լորձաթաղանթների վրա, միջկճղակային հատվածում և, երբեմն էլ՝ կրծի վրա, առաջանում են յուրահատուկ բշտիկներ (աֆթաներ):

Վիրուսը բավականին դիմացկուն է չորացման և ցածր ջերմաստիճանի նկատմամբ: Տավարի մազերի մեջ այն կենսունակ է մնում 49 օր, խոտի դեզի մեջ ամռանը՝ 1 ամիս, գոմաղբի 30-60սմ խոր շերտում՝ 6-9 օր, չոր գոմաղբի մեջ՝ մինչև 43 օր, արոտավայրերում՝ 1-7օր: Վիրուսը լավ պահպանվում է ավշային հյուսվածքում կամ ոսկրածուծում, որի պատճառով կարող է անցնել մսամթերքի մեջ:

**Վարակի աղբյուրները և վարակման ուղիները**

Վարակումն իրականանում է օդակաթիլների կամ շփման միջոցով: Վարակի տարածման աղբյուրը նաև հիվանդ և վիրուսակիր կենդանիներն են, որոնք առատ հոսող թքի, մեզի և կղկղանքի հետ վիրուս են արտազատում՝ վարակելով շրջապատի առարկաները: Վարակվում են անմիջական շփման, ինչպես նաև ալիմենտար ճանապարհով՝ վարակվածների, ջրի, տարբեր առարկաների միջոցով:

**Հիվանդության նշանները**

Գաղտնի շրջանը շատ կարճ է՝ 16 ժամից մինչև 3-8 օր: Վարակված կենդանիների մոտ արտահայտվող ընդհանուր կլինիկական նշաններն են՝ մարմնի բարձր ջերմաստիճանը (մինչև 41$^0$C), ախորժակի կորուստը, կաթնատվության նվազումը, կաղությունը, որոճող կենդանիների մոտ առատ թքարտադրությունը և քթային արտահոսքը, մատղաշ կենդանիների մոտ մահացությունը, բարձր հիվանդության աստիճանը, բշտերը բերանի շուրջը և ներսում, վերջույթների և կաթնագեղձի վրա:

**Ախտորոշումը**

Բնորոշ կլինիկական նշաններ դրսևորող մեծաքանակ վարակված կենդանիների առկայությունը մատնանշում է դաբաղի առկայությունը: Վիրուսի մեկուսացման և հակամարմինների հայտնաբերման միջոցով դաբաղի հաստատման համար վերցրված նմուշները հավաքում և ներկայացվում են լաբորատոր ախտորոշման:

**Բուժում**

Անհրաժեշտ է լավացնել կերակրման և խնամքի պայմանները, տալ դյուրամարս կերեր (կանաչ խոտ, շփոթ), ներարկել գերիմուն կամ ռեկոնվալեսցենտի շիճուկ. մատղաշին՝ 1-2մլ,

հասակավոր տավարին՝ մինչև 500-800մլ յուրաքանչյուր 1կգ կենդանի զանգվածի հաշվով, բերանի խոռոչը ողողել 2%-անոց քացախաթթվով կամ 1:1000 մարգանցաթթվային կալիումի լուծույթով, տալ սրտային պրեպարատներ, գլյուկոզա, ստրոֆանտ:

Կճղակների բարդությունները բուժում են որպես վերք: Բերանի խոցերը բուժում են հետևյալ օծանելիքներից որևէ մեկով. անաստեզին 2.5գ., նովոկաին 2.5, պղնձարջասպի փոշի 5, ձկան յուղ 20 և վազելին 70:

Կրծի և պտուղների ախտահարումների ժամանակ մաշկը գոլ ջրով լվանում են ու պահում չոր և մաքուր վիճակում: Բուժման համար օգտագործում են տրիպաֆլավինից, նովոկաինից պատրաստած օծանելիք (1+4+100 վազելին): Սմբակները մաքրում, լվանում են պղնձարջասպի 1%-անոց լուծույթով և քսում փայտի ձյութ:

Սահմանում են խիստ կարանտին, նշելով նրա սահմանները և սպառնալիքի ենթակա համայնքները: Սահմանափակման միջոցառումները պահանջում են մեծ ջանքեր՝ ուժեղացված կենսաանվտանգություն, բոլոր վարակված, բուժված կամ դաբաղով կասկածելի կենդանիների էֆթանազիա (սպանդ), վարակված և հիվանդության մեջ կասկածվող ընտանի կենդանիների հսկողություն և հետևելիություն, տեղաշարժման սահմանափակումներ:

Դիերի հորումը կամ այրումը կիրառելի է:

Դաբաղի վիրուս պարունակող կաթը պետք է եռացնել 1000C՝ ավելի քան 20րոպե տևողությամբ:

Անասնաշենքերի ախտահանության համար օգտագործում են կծու նատրիումի 2%-անոց տաք, ֆորմալդեհիդի 1%-անոց, ակտիվ քլոր պարունակող քլորաջրի 2%-անոց, յոդի 5%-անոց լուծույթներ: